Հավելված N 3
ՀՀ կառավարության 2024 թվականի
սեպտեմբերի 19-ի N 1482-Ն որոշման

Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ

1. Մասնագիտական որակավորման վկայականը (այսուհետ՝ վկայական) պատրաստվում է դեղնաշագանակագույն 100գ/մ² խտության A4 չափով:

2. Վկայականը պետք է ունենա հետևյալ պաշտպանիչ տարրերից առնվազն երկուսը՝

1) հոլոգրամ.

2) թղթի մեջ հատուկ մանրաթելեր, որոնք տեսանելի են դառնում ուլտրամանուշակագույն ճառագայթների ներքո.

3) առնվազն մեկ տողանի միկրոգրություն (տեսանելի է դառնում միայն խոշորացույցով նայելու դեպքում և չի վերատպվում տպիչ սարքով).

4) շոշափելի նիշեր, խորհրդանիշեր կամ պատկերներ.

5) կրկնակի համարակալում՝ սերիական համար և թողարկման համար.

6) պաշտպանված հետնապատկեր՝ նուրբ գիլոշիրային (ընդհատվող գծերից բաղկացած) գծանկարով և ծիածանային տպագրությամբ:

3. Վկայականը պատրաստվում է հայերեն և անգլերեն լեզվով:

4. Վկայականի վրա պետք է լինի Հայաստանի Հանրապետության միջազգային տարբերանշանը՝ «AM» և վկայականը տրամադրող լիազոր մարմնի անվանումը:

5. Վկայականի օրինակելի ձևը սահմանվում է՝ համաձայն ձևի:

Ձև
դիմերես

AM

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐԻ
ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ

N ___________

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը սույնով հավաստում է, որ____________________________________________________ ը՝
(անունը, հայրանունը, ազգանունը)

ծնված ___________________________________, դրական արդյունքով հանձնել է
(օրը, ամիսը, տարեթիվը, վայրը)

միջազգային ավտոմոբիլային փոխադրումների մասնագիտական որակավորման վկայական ստանալու համար անհրաժեշտ քննական թեստերը ------ ---------------- ՝ ՏՆԵԿ բազմակողմ քվոտայի շրջանակներում իրականացվող միջազգային ավտոճանապարհային բեռնափոխադրումների նկատմամբ կիրառվող Որակի խարտիայի դրույթներին համապատասխան:

Սույն վկայականը Որակի խարտիայի II գլխի 4-րդ հոդվածում նշված մասնագիտական որակավորման մասին վկայող բավարար ապացույց է:

Տրվել է՝________________________, _____ ______________ 20 թ.
(վայրը)

_______________ ___________________ ________________________
(պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ.

դարձերես

AM

Ministry of Territorial Administration
And Infrastructure

CERTIFICATE OF PROFESSIONAL COMPETENCE (CPC)
FOR THE ROAD TRANSPORT MANAGER

N _______

We...…………………………………………………………………………………… hereby
Organization
certify that ………………………………………………………………………….....
Name, Surname
born on…………………………………….… in ………………………………………….
date of birth place of birth

has successfully passed the tests for the examination (----- -------------20------) necessary for the award of the certificate of professional competence in road haulage in accordance with the provisions of the Quality Charter applicable to international road haulage operations carried out under the ECMT multilateral quota. This certificate constitutes the sufficient proof of professional competence referred to Article 4 of Chapter II of the Quality Charter.

Issued at..........................................................…., on ----- --------20 -------
place

_____________________________________________
positio signature name, surname

S. P.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

19.09.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ